[illegible] [illegible]

բարեգործ. ընկերութ

1900

361
Թ-31

1 MAR 2010

361
Թ-31

№ 4

# ՏԵՂԵԿԱԳԻՐ
## ԵՒ
# ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

1899—1900 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1900

ԴԵՎ. ՐԷԺ

…ան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

7081
361 / Ե-31
18 APR 2013
1007 / 32359

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԵՒ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 1899—1900 Տարեշրջանի

( 1899 Յուլիս 1-ից ց 30 Յունիս 1900 )

### Ա.

Ով Պարսկաստանին և մանաւորապէս Ատրպատականին երկու երեք տարուց ի վեր տիրող եղբէթէ միայուն հանգամանք ստացող տնտեսական նեղ վիճակին ծանօթ է, անտարակոյս մօտից կարող է իմանալ ընկերութեան անձուկ ու անհնարին կացութիւնը: Դեռ մինչև այսօր ցորենի խալվարը 30 թումանից պակաս չէ՝ Թաւրիզում. հաց չկայ շատ անգամ. համեմատաբար շատ թանգ են նաև կենսական այլ մթերքները: Անցած տարուանից Վասպուրականցի ամէն հասակի, սեռի ու վիճակի գաղթականներ մնացել էին Թաւրիզում ու շրջակայքում. այդ հերիք չէր. նորից մի-երկու խումբ թշուառ, կողոպտուած, մեծ մասը կանայք ու երեխաներ, հարստահարութիւնների ու կեղեքումների ձեռից փախել, ապաստանել էին Թաւրիզ: Երեխաներով ծանրաբեռնուած առաւել շատ թւով կանայք աշխատանքով չէին կարող ապրել. Թաւրիզը այսպիսիներին ասպարեզ չէ կարողացել տալ. ուստի ընկերութեան Վարչութիւնը անտարբեր աչքով թշուառութեան զոհերին դիտել չէր կարող ու ձեռք առաւ իր նախկին տարենե-րի մարդասիրական գործը. օգնութեան հասաւ, մնունդ, զգեստ, անցագիր ու ճանապարհածախս տալով ուղարկեց՝ ուր որ գաղթականները ցանկանում էին, թէպէտ և ընկերութեան նիւթական վիճակը չէր թոյլատրում: Այս տարի ընկերութիւնը գաղթականների համար ծախս է արել, հաշուելով յանուն գաղթակա-

92.760



նաց անցած տարուանից ընկերութեան մօտ մնացած 3772 ռուբ. 40 կոպ. գումարը, ընդ ամէնը 4258 ռ. 60 կոպէկ։

Վերջին տարիների ընթացքում առաւելապէս հացահատիկի նուազութիւնն ու անսովոր թանգութիւնը երբեմն լուռ ու մունջ ապրող անզացի աղքատիկ ընտանիքներին եւ մասնից սովի ու անյուսութեան ճանկերին. Ընկերութիւնը ստիպուած էր ձեռք պարզել ե՛ւ յիշեալ խեղճերին. եւ արդարեւ, այլ եւ այլ ժամանակներում ու դէպքերում, մանաւանդ ձմեռուայ ցրտերին, հասցրեց հարկաւոր օժանդակութիւնը տալով դրամական նպաստ. շոր ու հաց։ Ընկերութեան Վարչութիւնը անզացի կարօտ ընտանիքներին ու զանազան անձանց, ինչպէս հաշուեկշռից երեւում է, նիւթական օժանդակութիւն է տուել 1606 ռ. 5 կոպէկ։ Ընկերութիւնը՝ աշխատանքի անընդունակ, ամէն հնարաւորութիւնից զուրկ, հիւանդ, երեխաներով ծանրացած անձանց ու ընտանիքների համար բաց է արել իր օգնութեան դռները իր կարողածի համեմատ։ Այնտեղ ուր աշխատաւորի աջը չէ գործում, երկիրը ոչ մի ասպարէզ ու հնարաւորութիւն չէ տալիս, ընկերութիւնը չէ թերացել մարդասիրական բարի գործում, օգնելով գիտակցաբար որբին, անկարին, անանկին թէ թշուառին։ Ընկերութեանս Վարչութեան համար ծածուկ չէ այն անուր իրականութիւնը, որ հայերիս մէջ այն եւս պարզկաստանում, ամէն մի օգտակար ձեռնարկութիւն մէն մի քայլափոխի պատահում է նախանձի, քէնախնդիր եսասիրութեան, ու զրպարտութիւնների, որ արդիւնք է հասարակական — կրթական բացասական պայմանների։ Չտեսնուեցաւ մի անկողմնակալ, անկեղծ ու բարեկիրթ քննադատ, որ անձնապէս կամ գրաւոր ներկայացնէր իր նկատողութիւնները վարչութեան գործառնութիւնների համար եւ կամ բաց ստորագրութեամբ Մամուլի միջոցով պարզէր, բացատրէր իր կարծիքները, դիտողութիւններն ու խորհուրդները։ Բայց ընդ հակառակը Վարչու-



թիւնը պարզրխնութեամբ լսեց ու տեսաւ մի շարք մութ ու ծածկանուն անձերի առայօդ հրապարակութիւնները վարչութեան հասցէին մինչեւ անգամ հայհոյութիւններ....։ Մինչդեռ վարչութիւնը տպած Տեղեկագիրներում ազատ իրաւունք է տալիս գործերով — հաշիւներին ծանօթանալու ընկերութեան հետաքրքրուող անձանց դիմել վարչութեան եւ բացատրութիւն առնել։ Այսպէս թղթակիցների ու անխիղճ զրպարտանքներ տարածող հեղինակների կողմից բացարձակ անքարեխղճութիւն է, եսասիրութեան եւ սեւ սրտի արտայայտութիւն։ Ընկերութիւնը արհամարհել է եւ արհամարհում է պղպջակներին եւ անյողդողդ առաջ տանում իր գործը, դուրս չգալով ընկերութեան Կանոնադրի գծած շաւղից։

Մարդկային կամ բնութեան աղէտների ժամանակ օգնութեան շտապել ընկերութեան ընդունած Կանոնադրութեան տրամադրութիւնից լինելով, վարչութիւնը ուղարկել է այս տարի 1127 ռ. 30 կոպէկ (200 ռուբլի) ընկերութեան գանձից Ախալքալակի անբաղդ արկածեալներին, Մշակ լրագրի խմբագրութեան միջոցով։ Բացի ընկերութեան արած նուիրատուութիւնից՝ Վարչութեան նախաձեռնութեամբ Թաւրիզում հանգանակուել է 240 ռուբլի 56 կոպ. եւ ուղարկուել յիշեալ արկածեալներին, նոյնպէս Մշակի միջոցով։

Ընկերութիւնը նախկին տարիներում այս ու այն հաստատութեանց տուած նպաստները շարունակել է ե՛ւ այս տարի։ Թաւրիզի Ներդաթաղի Արամեան եւ Ս. Աննայեան օրիորդաց ուսումնարաններին նպաստ է տուել 1500 ռ. 25 ձրիավարժների տարեթոշակը։ Լիլաւա թաղի Թամարեան օրիորդաց ուսումնարանին 3000 ռ.։ Թաւրիզի շրջակայքում եղած Մուժամբար գիւղի ուսումնարանին 300 ռ.։ Երկու աղքատիկ աշակերտաց՝ Ղարադաղի Ագաղան գիւղացի Հմայակ Մկրտչեանի եւ Թաւրիզեցի Աւագ Խաչատրեանի ուսմանց ծախսերի համար 84 ռ. 40 կ.։

Բ.

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՏԱՑԱԾ ՆՈՒԷՐՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| Պարսկաստանի Շահրուդ քաղաքի հայերից Աւագ Մելիք-Աբրահամեանցի ձեռամբ . . . . | 330 | ռու. | կոպ. |
| Բագուից Տիկ. Իսկուհի Յակովբեանցի ձեռամբ | 666 „ | 5 | „ |
| Թեհրանից պրն. Գաբրիէլ Պապեանի „ | 270 „ | — | „ |
| Երեւանցի „ Տիգրան Աֆրիկեանից | 2551 „ | 65 | „ |
| Թիֆլիսից „ Սերովբէ Կիւլպէնկեանից | 200 „ | — | „ |
| Բագուից Տիկ. Սարգսեանի միջոցով . | 1630 „ | — | „ |
| Արժ. Բագրատ վարդ. Վարդազարեանի ձեռ. | — | — | |
| Մոզդոկից Տիկ. Վառվառէ Ալդոթեանից | 10 | րուբլի | |
| „ „ Մարիամ Գալազեանից | 10 | „ | |
| „ „ Ովսաննա Կաժենիկեանից | 10 | „ | |
| „ „ Նաւասարդեանից . | 10 | „ | |
| „ „ Եղիս. Նազարեանից . | 10 | „ | |
| „ „ Մարիամ Կաժենիկեանից . | 25 | „ | |
| „ „ Գուստիանէ Գանջումեանից | 10 | „ | |
| Էջմիածնից Արժ. Մաթէոս վարդ. Մաթէոսեանից | 5 | „ | |
| „ „ Թովմա վարդ. Բաղդասարեանից | 9 | „ | |
| „ „ Սահակ վարդ. Ամատունուց | 6 | „ | |
| „ պրն. Աւետիս Օհանջանեանից | 5 | „ | |
| Մոսկուայից „ Գրիգոր Լիանոզեանից | 300 | „ | |
| „ „ Ալեքսանդր Մաթինեանից | 50 | „ | |
| „ „ Գրիգոր Արեանից | 50 | „ | |
| „ Տիկ. Եղիսաբէթ Մամիկոնեանից | 25 | „ | |
| „ պրն. Մինաս Գասպարեանից | 50 | „ | |
| „ „ Եղբարք Գողոտեաններից | 25 | „ | |
| „ „ „ Թամանցեաններից | 50 | „ | |
| „ „ Մկրտիչ Գապովեանից | 10 | „ | |



| | | |
|---|---|---|
| Մոսկուայից պրն. Նիկողայոս Սիմոնեանից | 25 | րուբլի |
| „ „ Ծատուր Գեանջողլուեանից | 25 | „ |
| „ „ Մինաս Գապովեանից | 10 | „ |
| „ „ Սերովբէ Անանեանից | 10 | „ |
| „ „ Գալմիկեանից | 10 | „ |
| „ „ Էմմանուէլ Գապովեանից | 100 | „ |
| „ „ Միրզաջան Գուլեանից | 100 | „ |
| „ „ Գէորգ Սուլթան-Շահից | 50 | „ |
| „ „ Եղբ. Ջանումեաններից | 50 | „ |
| „ „ Ա. Յակովբեանից | 25 | „ |
| „ „ Սմբատ Շահ-Ազիզեանից | 25 | „ |

Վարչութիւնս յայտնում է իւր ջերմագին շնորհակալութիւնը Ազնուափայլ Տիկնանց եւ Յարգելի Պարոններին, որոնք իրանց նուիրատուութիւններով աջակից հանդիսացան բարոյապէս եւ նիւթապէս Ընկերութեանս ջանքերին:

Գ.

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅ. ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Կրթական գործի մեծ կարեւորութիւնը Ատրպատականում աւելի եւ աւելի անհրաժեշտ դարձաւ ընկերութեան համար այն ժամանակ երբ մօտիկից ուսումնասիրեց ու իմացաւ այդ գիւղացի ազգաբնակութեան բարոյական ու տնտեսական խիստ անմխիթար դրութիւնը: Դարադաղը, Ուրմին եւ աւելի Ուրմիի կից Բարանդուզ գաւառակը, այն հայաշատ գիւղերը զուրկ ամէն մի խնամքից, ոչ եկեղեցի, ոչ ուսումնարան. ժողովուրդը թաղուած խորը տգիտութեան եւ տնտեսական քայքայման մէջ: Բարանդուզում հայ գիւղացին մինչեւ անգամ իւր մայրենի լեզուն, հայերէ-

նի աւանդութիւնները խսպառ կորցրած, ոչնչանալու վտանգին է մօտեցել: Ընկերութիւնը առաջին նպատակ ընտրելով կրթութեան փրկարար գործը, իւր ուշադրութիւնը դարձրեց Հայ գիւղացու մտաւոր կրթութեան վրայ, կամենալով հնարաւոր եղած ջանքերով ազատել նորան կորստի ճիրաններից, Թիկունք ունենալով Հայ հասարակութիւնը և մարդասէր անձանց աջակցութիւնը: Նոյն հաւատքով երկու տարի առաջ Ընկերութիւնը ձեռնարկեց յիշեալ բազմահայ գաւառներում բաց անել գիւղական ուսումնարաններ 4 տարուայ շրջանով: Ատրպատականի Հայ գիւղացու այս միակ փրկութեան գործը անտարակոյս կ'արժանանայ Հայ բարերարների լուրջ ուշադրութեանը: Ընկերութեան նիւթական ուժից բարձր այս ձեռնարկութիւնը առաւել ընդարձակ ծաւալ կստանայ, եթէ օգնող բազուկներ հասնին ու աջակցեն գործին:

## ԸՆԿ. ԱՂԱՂԱՆ ԳԻՒՂԻ ՈՒՍ. Ղարադաղում

Թէպէտ Աղաղանում նախընթաց տարիները ուսումնարան եղել է արտաքին նպաստներով և մասամբ գիւղացոց մասնակցութեամբ, սակայն ինչպէս և իցէ գլուխ չէ եկել գիւղի չքաւորութեան պատճառով: Ընկերութիւնը օգտակար գտաւ Ուսումնարանը առնել իւր հովանաւորութեան ներքոյ. վճարեց նախկին ուսուցչի 390 ղրան պահանջը, 1899|900 տարեշրջանից պահեց իւր ղեկավարութեան տակ: Ուսումնարանում այս տարի սովորում էին 35 աշակերտ: Գիւղը ունի սեպհական ուսումնարան, բայց ամենայնիւ կարօտ շինութեան, ըստորում խարխուլ է և չունի ոչ մի յարմարութիւն:

Պարոն ուսուցչի և գիւղացիների ընկերութեան տուած ղեկուցումներին նայած ուսումնարանը ունի մի հող, որի տարեկան սերմը և մշակութիւնը գիւղացիք են տալիս, հասոյթը վա-



յելում է գիւղատէր Թուրքը շնորհիւ մի երկու անպիտան մարդոց: Եթէ հողի հասոյթը ուսումնարանին յատկանայ, ուսումնարանը տարուէ տարի կստանայ 100 թումանից աւելի մի գումար, որով կարելի կլինի ուսումնարանը դնել առաւել բարձր վիճակի մէջ: Յիշեալ սեպհականութեան և անձերի մասին վարչութիւնը գրաւոր դիմում է արել վիճակիս Թեմակալ Սրբազանին և լիայոյս է, որ նորին Սրբազնութիւնը պարտու պատշաճը պէտքէ անօրինէ:

Ուսումնարանի ամբողջ ծախսը կատարուել է ընկերութիւնից, գիւղացիք Թոշակագրամ են վճարել միայն 242 ղրան այդ գումարի հետ մէկտեղ ընկերութիւնը ծախսել է, ռոճիկ, գիրք և այլն 1457 ղրան 50 կոպէկ:

## ԳԻՋԷ-ԹԱՔԷԻ ՈՒՍՈՒՄ. Բարանդուզում

Գիւղը զուտ Թրքախօս է:

Ուսումնարանս բացուած է երկու տարի առաջ, 1898|99 ուսում. տարեշրջանին: Ուսումնարանը երկսեռ է, ունի մի ուսուցիչ և մի ուսուցչուհի (ամուսիններ): Ուսումնարանում այս տարի կային 15 աղջիկ և 23 տղայ: Աշակերտ ու աշակերտուհի ազատ խօսում են հայերէն: Ուսումնարանիս համար առաջին տարին Երևանցի Պրն. Տիգրան Աֆրիկեան նպաստ է տուել 1000 ղրան, 1899—900 տարուանից Ազնիւ Պրնը. յանձն առաւ ուսումնարանի ամբողջ ծախսը ինքը հոգալ ղեկավարութեամբ ընկերութեանս: Ուսումնարանի բոլոր ծախսը-ռոճիկ, գիրք, ձեռագործութեան նիւթեր և այլն եղել է այս տարի 2751 ղռ. 65 կոպ. որը վճարել է բարերարը, որին ընկերութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը հրապարակաւ:

**ՃԱՃԱՌՈՒ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄ.** Խարանդուզլումը

Գիւղի հայ բնակիչները զուտ Թրքախօս են: Ուսումնարանը երկսեռ է և բացուած է երկու տարի առաջ 1898|99 ուսում. տարեշրջանից: Ուսումնարանն ունի մի ուսուցիչ և մի ուսուցչուհի (ամուսիններ): Ուսումնարանում այս տարի կային 24 աշակերտուհի և 30 տղայ, ընդ ամէնը 54 աշակերտ: Ուսուցչաց ռոճիկ, գիրք, ուսման պարագաներ, ձեռագործի նիւթեր և այլն բոլորը ընկերութեան կողմից տրուելով, ծախս է եղել 2520 ղռան 95 կոպէկ:

---

**ԻՔԻ-ԱՂԱՋ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄ.** Ուրմիում

Ուսումնարանը արական սեռի է և հիմնուած 1899|900 տարեշրջանից: Ունի մի ուսուցիչ: Այս տարի ուսումնարանում կային 15 աշակերտ: Շատ աւելի կարող են լինել, եթէ հնար լինի ծախսը մեծացնել: Գիւղացիք մասնակցել են գործին, տալով ուսուցչին ձրի բնակարան և սնունդ: Ռոճիկ և այլն ուսման ծախսեր ընկերութիւնից են տրուել և ընդ ամէնը ծախսէ եղել 594 ղռ:

---

**ԹԱՀՎԱ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ** Ուրմիում

Բացուած է 1899|900 ուսում. տարեշրջանին: Ուսումնարանը ունի մի ուսուցչուհի: Թէպէտ իգական սեռի է յատուկ ուսումնարանս. սակայն մի քանի տղաներ ևս մասնակցում են: Այս տարի ուսումնարում կային 30 աղջիկ և 5 տղայ: Գրքի, գրչի, թղթի, ձեռագործական նիւթերի և ռոճկի համար ծախս է եղել 684 ղռան:

Վերոյիշեալ 5 ուսումնարաններում աւանդուել են հետևեալ առարկաները, Հայոց լեզու. Իրագիտութիւն. Հայոց պատմութիւն, Թուաբանութիւն, Կրօն, Գրչութիւն, Երգ-եկեղեցական



և ազգային — ժողովրդական և 3 ուսումնարաններում ձեռագործ ու կար համեմատ գիւղական պահանջների:

---

Ինչպէս արդէն երևաց, ընկերութեան գիւղական 5 կրթարաններում այս տարի սովորել են երկու սեռից 177 գիւղացի մանուկներ՝ զուրկ մտաւոր կեանքից ու կրթութիւնից: Ուսուցիչները եկեղեցիներում կատարել են նաև դպրի պարտականութիւն, վառ պահելու համար ժողովրդի լեզուի սէրը և սրբազան աւանդութիւնները: Վարչութիւնը հեղինակաւոր ուսուցիչների ձեռքով կազմել է տալ 4 դասարանեան ծրագիր, գիւղական պահանջների համապատասխան ուղղութեամբ: Եթէ ընկերութիւնը ստանայ բարերարների նիւթական ձեռնտուութիւնը, ամէն պատրաստակամութիւն ունի ընդարձակելու այդ չափը և աւելացնելու նորանոր ուսումնարաններ, որոնց այնչափ պէտք ունի Ատրպատականի գիւղացին: Չնայած միշտ այս ու այն գիւղերից ընկերութիւնը աղերսագրեր է ընդունում ուսումնարաններ բաց անելու, սակայն ընկերութեան նիւթական վիճակը չէ ներում առ այժմ: Արդէն ուսումնարան եղած գիւղերի ժողովրդեան գրաւոր յայտնած ջերմ շնորհակալութիւններն մեծ գրաւական են, թէ ինչ մեծ տպաւորութիւն է թողնում ուսումնարանը ժողովրդի վրայ:

110 Հայ տուն ունեցող և հայ գիւղերով շրջապատուած Խոյ քաղաքը ուսումնարան չունի: Այս տարի Խոյի ժողովուրդը և մի քանի ուսումնասէր Պարոններ խնդրել են ընկերութիւնից այդ քաղաքում բանալ ուսումնարան, գիւղացւոց մասնաւոր աջակցութեամբ. և որոշեալ 2 կրթասէր ազգայիններ խոստացել են տարին 60 թուման նպաստ նշանակել, վարչութիւնը վճռեց յառաջիկայ ուսում. տարուանից Խոյում հիմնել ուսումնարան:

Վարչութիւնս ազնիւ պարտք է համարում յայտնել, որ այս տարի Պետերբուրգից պրն. Լ. Տիգրանեան ուղարկել էր ըն-

կերութեան Խլնիի ռուսերէն քարտէզները՝ աշխարհի 5 մասերը, աղքատիկ ուսումնարաններին նուիրելու համար. Վարչութիւնը քարտէզներին աստառ չինել տալուց յետոյ ուղարկեց Նարան-դուզ Դիզէ-Թաքէի ուսումնարանին նուէր։

Թիֆլիսից Հայոց Հրատարակչական ընկերութիւնը ու-ղարկել էր վարչութեան 40 օրինակ 4 տեսակ մանկական բովան-դակութեամբ պատկերազարդ գրքեր, զանազան գրադարաններին նուիրելու նպատակով։ Վարչութիւնը բաժանեց այսպէս՝

4 օրինակ Թաւրիզի Արամեանդպրոցի աշակ. գրադարանին
4 " Լիլաւայի դպրոցի " "
4 " Մուժամբար գիւղի նախակրթարանին
4 " Ատրպատականի Հայ. Ընկ. Մանկապարտէզին
4 " Սալմաստի Բաֆֆի գրադարանին
4 " Դիզէ-Թաքէի ուսումնարանին
4 " Նաբառու գիւղի "
4 " Ոահմա " "
4 " Աղաղան " "
4 " Ընկերութեանս Մանկապարտէզին

## ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԹԵՐՑ. ԳԻՒՂԵՐՈՒՄ

Թիֆլիսից 3 երիտասարդներ հաւաքել և պրն. Համբար-ձում Առաքելեանցի միջոցով ուղարկել էին ընկերութեան 600 հատ այլ և այլ ընթերցանութեան գրքեր, գիւղերում Գրադա-րան—Ընթերցարաններ հիմնելու համար։ Վարչութիւնս գըր-քերը 3 մասի բաժանելով ուղարկեց մի մասը Վարդադաղի Աղա-ղան գիւղը, մի մասը Դիզէ-Թաքէ և միւս մասը Նաբառու։ Գրադարան—Ընթերցարանները հիմնուեցան ընկերութեան Ու-սումնարաններին կից, այն պատճառով, որ ընկերութեան ուսու-ցիչները, որոշ ժամանակներում ժողովրդին հրաւիրեն ընթերցա-



րան, ընտրանոք կարդան ու բացատրեն. ի հարկին օգուտ քաղեն նաև ուսումնարանների աշակերտ ու աշակերտուհիները, Գրա-դարան — Ընթերցարանները մնալով ընդ միշտ գիւղերի սեփհա-կանութիւնը։ Ուսուցիչների տուած զեկուցումներից և կողմնա-կի տեղեկութիւններից երևաց, որ զգալի արդիւնք է արտադրել այդ ձևը։

Վարչութիւնը ծանօթ 3 երիտասարդներին և նուիրա-տուներին պաշտօնապէս շնորհակալութիւն արտայայտելով հան-դերձ յայտնում է ի գիտութիւն, որ ուրախութեամբ է ընդունում ամէն տեսակ ուսումնարանական թէ ընթերցանութեան գրքեր, դասական առարկաներ, ձեռագործական նիւթեր, լրագիրներ և այլն, և պատշաճապէս անօրինում կարիքների համեմատ, տալով ա-մէն տարի պաշտօնական հաշիւ։

Այս մասին վարչութիւնը խնդրում է Մամուլի և պ. պ. հեղի-նակների և թարգմանիչների քաջալերութիւնն ու աջակցութիւնը։

Դ.

## ԸՆԿ. ԹԱՒՐԻԶԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### Կար ու Ձևի Արհեստանոց

Ընկերութեան Կար ու Ձևի Արհեստանոցը սովորական կանոնաւորութեամբ ընթացաւ նաև այս տարի, Մոսկուայից հրա-ւիրուած մի հմուտ ուսուցչուհու առաջնորդութեամբ։ Այս տա-րի Արհեստանոցում սովորում էին 18 աշակերտուհիներ, որոնց 7 ձրիավարժներ էին։ Մայիս 19 ի հրապարակային քննութեան մէջ Ընկերուհիների ներկայութեամբ ու վկայութեամբ իբրև ընթաց-աւարտ վկայագրեր ստացան հետևեալ 4 Օրիորդները.

| | |
|---|---|
| Օր. Վարդուհի Յակոբեանց | Օր. Վարդանուշ Ներսէսեանց |
| " Սաթենիկ Յովհաննիսեանց | " Կատարինէ Գալստեանց |

## ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Մանկապարտէզը կանոնաւոր ընթացք ունէր նաև այս տարի: Մանկապարտիզում կային 21 երկսեռ մանուկներ, 3 թօշակաւոր և 18 ձրիավարժ: Մանկապարտէզի քննութիւնը ցոյց տուեց գոհացուցիչ առաջադիմութիւն, երգերի, շինուած նիւթերի, մարմնամարզութեան և մանաւանդ պատկերների — գիտողական ուսման ու հէքեաթների կողմից:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Վարչութիւնն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գորգագործութիւնը գնալով շատ աւելի ընդարձակ չափեր ստացաւ Թաւրիզում և անկարելի է մրցել Թուրք ագարանակութեան հետ. Հետևաբար շատ ծախս էր պատճառում ընկերութեան գանձին, ուստի առ այժմ դադարեցրեց գորգ գործելը մինչև նոր տնօրինութիւն, յատկացնելով այդ ծախսերը կրթութեան գործին, որն այս րոպէիս այնչափ անհրաժեշտ է և ծանրացած ընկերութեան վրայ, մանաւանդ այժմ գաղթականներ շատ չեն Թաւրիզում: Ընկերութիւնը մինչև այժմ ունեցել է 10 վարպետ կանայք ու օրիորդներ, որոնք յաջողութեամբ կարող են գորգ գործել:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԱՂԱՅԻ ՃԻՒՂԸ

Երկու տարի առաջ Մարաղայում կազմւող Հայ Տիկինների ընկերութիւնը ցանկութիւն էր յայտնել Գեր. Սահակ Եպս. Այվատեանի միջոցով ընկերութեան ճիւղը լինելու. ընկերութիւնս ուրախութեամբ ընդունելով նոցա առաջարկը, յոյս ունէր, որ իրանց միաբան գործունէութեամբ օգտակար կը դառնային Մարաղայի կրթական հաստատութիւններին: Ցաւելով



յայտարարում է վարչութիւնս, որ Մարաղայի ճիւղը զոհ գնաց ներքին երկպառակութիւնների և իւր ոլրանի մէջ քայքայուեց առանց մի օգուտ արտադրելու:

## Ե.

Վարչութիւնս պատիւ ունի յայտնել, որ երկրիս ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐ Եւրոպա ճանապարհորդելու համար Թաւրիզ այցելելիս, Առաջնորդ Սրբազանի և Վսեմափայլ Ծատուրխան Սէթ-Խանեանի միջոցով ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ և ԻՒՐ Բարձր Սադրազամի մի-մի ընտիր ձեռագործ ընծայ մատուցուեցաւ որոնք ընկերութեանս Արհեստանոցում էին պատրաստուած, և մի-մի պարսկերէն ուղերձ: ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ մեծ համակրութեամբ բարեհաճեց ընդունել ընկերութեան նուէրն ու ուղերձը, գովեց նորա կատարած աշխատութիւնը և Բարձր. Սադրազամի բերանով Հայրական խոստումն տուեց Եւրոպայից վերադարձին արժանացնել ընկերութեան ԻՒՐ Արքայական շնորհացն ու քաջալերութեանը:

Ընկերութիւնս ունի այս տարի 57 տարեկան Անդամուհի 6 պատուաւոր Անդամ և 36 Մշտնջենական Անդամուհի Թաւրիզում և այլ տեղեր:

Վարչութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը Մոսկուայի Համեստափայլ Տիկիններին և Օրիորդներին, որոնք Մոսկուայում արձագանք գտնելով ընկերութեան նախորդ տարուայ Տեղեկագրի յայտարարութիւնը, բարեհաճեցան իրանց նուէրները չխնայել և Մշտնջենական Անդամուհի արձանագրուել ընկերութեան միւս Անդամուհիների շարքում:

Մոսկուայի Մշտնջենական Անդամուհիներն են

1 Տիկին Կատարինէ Ժամհարեան նուիրել է 200 րուբլի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Տիկ. | Բեթեան Ժամհարեան | " | 150 | " |
| 3 | " | Նախշուն " | " | 150 | " |
| 4 | " | Վառվառէ Քանանեան | " | 100 | " |
| 5 | " | Հեղինէ Գէորգեան | " | 100 | " |
| 6 | Օր. | Յոյս Սահար-բէկեան | " | 100 | " |
| 7 | Տիկին | Թագուհի Տէր-Յակոբեան | " | 200 | " |
| 8 | " | Վալերիա Տէրեան | " | 50 | " |
| 9 | " | Տիրուհի Պապովեան | " | 100 | " |
| 10 | " | Թագուհի Կարոսկեան | " | 50 | " |
| 11 | " | Հռիփսիմէ Մալոմա | " | 50 | " |
| 12 | " | Շուշանիկ Խառամաճեան | " | 50 | " |
| 13 | " | Եղիսաբէթ Յովհաննեան | " | 100 | " |
| 14 | " | Յուստինէ Շուշուեան | " | 100 | " |
| 15 | " | Եւպրաքսինէ Օղապաշեան | " | 50 | " |
| — | | Նախիջևանից Տիկին Աշխէն Յովհաննեան | | 50 | " |

Վարչութիւնը Մոսկուայի Յաջորդ Արժ. Բագրատ վ. Վարդապետեանի միջոցաւ ստանալով համեստուհի Անդամուհիների և այլ Տիկինների ու Յարգելի Պարոնների նուիրատուութիւնները ընկերութեանս. չէ կարող մոռանալ և չյիշատակել յիշեալ Արժանապատիւ Եկեղեցականի երկու տարուց ի վեր ընկերութեան մատուցած անբաւ ծառայութիւնները, աջակցութեամբ Մեծանուն Եղբարք Թումանեանների, որոնք իրաւամբ արժանի են խորին շնորհակալութեան և երախտագիտութեան:

Ընկերութիւնը երբ բարոյական փոխարինութիւն Արժ. Բագրատ վարդ. Վարդապետեանցի եռանդուն գործունէութեան ընտրունեց նորին Արժանապատուութեան ընկերութեան Պատուաւոր Անդամ:

Ընկերութիւնը սիրում է սպասել և յուսալ, որ ընկերութեան ձայնը և Նպատականին օգնելու կարիքը արձագանք կըգտնի նաև արտասահմանեան այլ կենտրոնների հայ Տիկինների



և Օրիորդների սրտերում, որով Վարչութիւնը յորդանօք և ուրախութեամբ կարձանագրէ իւր Անդամուհիների շարքում նորանոր Անդամուհիներին, այսպիսով մի ազնիւ կապ ու յարաբերութիւն կը գոյանայ պարսկահայ Տիկինների և լուսաւորուած երկիրների Տիկինների միջև:

Ընկերութեան Պատուաւոր Անդամուհի ընտրուեցան նաև նախկին վարչութեան Նախագահ և այժմ Բագւում Տիկ. Խուկուհի Յակովբեանց և Բագուեցի Տիկ. Եղիսաբէթ Սարգսեանց, որոնք յոյժ գնահատելի աջակցութիւն են մատուցել ընկերութեան առաջադիմութեանը:

Ծանօթ. Ընկերութեան Տարեկան Անդամ գրուողը վճարելու է 4 րուբլի Ռուսաստանի համար. Մշտնջենական Անդամ լինել ցանկացողը 50 րբլ. միանուագ. Իսկ Պատուաւոր Անդամ լինելու համար, նայած թէ ինչ չափով են նպաստում և ինչ չափով աջակցութիւն են ցոյց տալիս ընկերութեան զարգացմանը:

# ՀԱՇՈՒԵ ԿՇԻՌ

## 1899|900 ՏԱ. ՐԵՇՐՋԱՆԻ

## ՊԱՐՏՔ ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ

| | ռուբ. | կպ. | ռուբ. | կպ. |
|---|---|---|---|---|
| Տրուած Նպաստներ Հայաս. գաղթականց. | 4258 | 60 | | |
| » » Տեղացի չքաւոր և ղանազան անձանց . . | 1606 | 5 | | |
| Բերդաձորի Արամեան և Ս. Աննայեան ուսումնարանաց Նպաստ . . | 1500 | | | |
| Աշակերտ Հմայակ Մկրտչեանի և Աւագ Խաչատրեանի Ուսմանց վարձ . | 84 | 40 | | |
| Մուժամբար գիւղի Ուսումնարանին Նպ. | 300 | | | |
| Լիլաւայի օր. Թամարեան Ուս. Նպաստ | 3000 | | | |
| Ախալքալակի արկածեալներին Նպաստ | 1127 | 30 | 11876 | 35 |
| Արհեստանոցի ծախս ուսուցչուհու և ծառայի ռոճիկ . . | 4884 | 95 | | |
| Մանկապարտիզի ծախս՝ ադախնու և ուսուցչուհու ռոճիկ . . | 1629 | | | |
| Գործագործութեան ծախս . | 2997 | 55 | | |
| Ջանաղանք քարտուղարի, ծառայի ռոճ. փայտ տպագրութեան եայլն . | 3468 | 25 | | |
| Դիղաձաքէի Ուսումնրնին. ծխս. և ռոճ. | 2751 | 65 | | |
| Ղարադաղի Աղաղանի Ուս. ծախս և ռոճ. | 1457 | 50 | | |
| Բաբաառուի » » » » | 2520 | 95 | | |
| Իբի-աղաջի . » . « » « | 594 | | | |
| Ռաշվայի » » » » | 684 | | 20987 | 85 |
| 1899 \| 900 — ի Դրամագլուխ . | | | 81067 | 50 |
| | | | 113931 | 70 |



## ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՔ

| | ռուբ. | կպ. | ռուբ. | կպ. |
|---|---|---|---|---|
| 98 \| 99 Տարուայ Դրամագլուխ . | | | 77889 | 45 |
| Ստացուած Տոկոսիք . . | 7476 | 75 | | |
| » Նուէրներ . . | 10976 | 95 | | |
| Արհեստանոցից Թօշակ, ղակաղից և բաղարից . . . | 2846 | 55 | | |
| Մանկապարտիզի Թօշակներից . | 80 | | | |
| Մշտնջենական և Տարեկան անդամճար. | 10862 | | | |
| Պատրաստի 25 գործերի արժէքը | 3800 | | 36042 | 25 |
| | | | 113931 | 70 |

52359

Гос. Публ. Библиотека Арм. ССР им. А. Мясникяна

Հաշիւների մանրամասնութեամբ հետաքրքրւող անձինք կարող են գրաւոր դիմել ընկերութեանս Վարչութեան և ստանալ մանրամասնութիւնք վարչութեան Քարտուղարից գրաւոր ներկայացնելով նաև իրանց զեկուցումներն ու նկատողութիւնները Վարչութեան. այլապէս անյայտ հրապարակութիւններն ու կանխակալ տարաձայնութիւնները, համարելով զրպարտութիւն, կարհամարուին իսպառ Վարչութեան կողմից:

Վարչութիւնը խնդրում է դրամական նպաստ, ուսումնական ու ընթերցարանական գրքեր, նամակ և այլն ուղարկել հետևեալ հասցէով:

Վարչութիւն Թաւրիզի Հայուհ. Բար. Ընկերութեան

„ Société de bienfaisance des dames Arméniennes de Tauris „ — Tauris — Perse —

Անդամուհիք Վարչութեան

Նախագահ Սրբուհի Ամատունեանց
Գանձապահ Իսկուհի Մելիք-Խաչատրեանց
Հռիփսիմէ Ֆեներճեան
Արծուիկ Նազարբէգեան
Խորհրդականք Զաբէլ Եղիազարեան
Փերրոնէ Մովսիսեան
Մարիամ Մասումեանց

29 Յունիս 1900
Թաւրիզ

ՀՀ Ազգային գրադարան
NL0211240

42.760